# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան 16.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել է տարբերակ 5-ի նյութական իրավունքի բաժնի 2.46-րդ, 10"31-րդ, 11"45-րդ, 14"9-րդ, 18"42-րդ , 39"/34/64 –րդ հարցերը,

***46-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները բխում է քրեական իրավունքի տեսության փաստական սխալի պարագայում արարքի որակման կանոններից, ուստի տրվում է 1 միավոր:*

***31-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա փաստերից: Միևնույն ժամանակ հավակնորդը Գ-ի և Դ-ի արարքները չի քննարկել կաշառք ստանալու և տալու համատեքստում, այն պայմաններում, երբ կաշառքի առարկա կարող են լինել նաև ոչ նյութական առավելությունը, այդ թվում՝ սեքսուալ բնույթի ծառայությունները, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***45-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

***9-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, քանզի բխում են հատուկ սուբյեկտով արարքի որակման կանոններից, ուստի հավակնորդին տրվում է 1 միավոր:*

***42-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ծանր վնաս պատճառելը ավազարկության առանձնապես ծանրացնող հանգամանք է, իսկ քրեաիրավական նորմերի մրցակցության կանոններից ելնելով ծանրացնող /զենքի գործադրմամբ/ և առանձնապես ծանրացնող հանգամանքների մրցակցության պայմաններում արարքը չէր կարող որակվել ծանրացվող հանգամանքով, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***64-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի այդ հիմնավորումները չեն բխում իր իսկ կողմից մեջբերված ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***1261*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 23 միավորը բարձրացնել 3 միավոր՝ արդյունքում արձանագրել 26 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ